

Յտեաություն, Ծիտ

վեպ

"Ich rufn zu dir, Herr Jesu Christ"

Յոհան Սեբաստիան Բախ

Եվ ահա երագում եմ, թե երկուսով “ կամ գուցե երեք հոգով  
մենք մեն-մենակ կնավարկենք, “ աշխարհում ո՛չ ոք  
երբեք չի իմանա, թե մենք նավարկում ենք եթե ոչ  
դեպի ոչինչը, գոնե դեպի այլուրն ու հավերժը,  
Թե նավարկում ենք այն ծովի վրա, որ շատ ավելի կապույտ է,  
քան ամբողջ կապույտն աշխարհի,  
Այն ծովի վրա, ուր երբեք չեն գոռում` «Յամա՜ք»:

## Գիյում Ապոլիներ

մեկ

Ես 28 տարեկան եմ: Գրված է նրա նոթատետրի բոլոր էջերի սկզբում, որ բացում է ժամը մեկ, թերթում ու անընդհատ կրկնում, որ 28 տարեկան է, կրկնում է մաշկը շառագունող տազնապով՝ սկզբում նայելով թվերին. հանկարծ երկուսը երեք դարձած չլինի: Հետո սեխաձև գլուխը՝ մեռած մարդու անգոր գլխի պես կախում է նոթատետրի էջերից մեկի վրա ու գրում. երկուսը երեք երեք չի դառնա, որովհետև զորացրվելուց հետո տարածության ու ժամանակի միակ նահանգապետը դու ես, ինչպես պապիկը, որ լուսաբացին վերջապես փակեց իր հաշիվները պատմության հետ: Տե՛ս, թե ինչպես է 28 տարեկան Դյուրերը ինքնանկարում պատկերում փրկչի շարժումը: Վրձնահարվածների անհավանական, առեղծվածային վարպետություն: Վրձինն ասես տիեզերական հեռավորությունից է աշխատել՝ մտքի ու զգացողության վերահսկելի համադրությամբ: 28-ամյա Դյուրերի ինքնանկարը Աստծուն ձեռնոց նետող կատարելություն է, նրա ժամանակը միշտ կմնա հավերժությունը, իսկ դու, որ արդեն 28 տարեկան ես, բացի Ծոխից այլևս քեզ պատկանող ժամանակ չունես: Յրված զինվոր: Սեփական հայացքի ազնվությունից չեն ամաչում ու ամոթի վախից չեն սպանում թշնամուն: Քո մեջ ժամանակը տեսնելու փափուկ ազնվություն չի մնացել: ՓԱՓՈՒԿ ազնվություն: Գոնե հիմա խոսք տուր ինքդ քեզ: Խոսք տուր, որ ամոթի վախից չես սպանի երազանքդ: Ես խոստանում եմ՝ միշտ 28 տարեկան կլինեմ ու ամոթի վախից չեմ խզրզի դեմքս ու ամեն առավոտ՝ մինչև իմ լուսաբացը, պապիս պես կուտեմ մի բանան ու կխմեմ մի բաժակ սուրճ, կկերակրեմ Ծոխին, կլողացնեմ, կշոյեմ նրա բուրդը և ամիսը գոնե մեկ անգամ կծխեմ Ալեխոյի հայրենիքի թուփը և գուցե մի օր, եթե բախտս բերի, Շիլեյի պես կվարակվեմ արդեն 21-րդ դարում ծնունդ առած ինչ-որ հետաքրքիր վիրուսային հիվանդությամբ: Նա չգիտի, թե պապն առաջին անգամ երբ է բանան կերել, գուցե Ռուսաստանում տների կտուրներ կապելիս կամ որբերին Եվրոպա տանող գնացքի մեջ: Բայց նա հիշում է այն օրը, երբ պապը վառեց իր առաջին սիգարը: Երևակայությունը հուզող այդ շագանակագույն, բարալիկ երակներով սիգարը պապի հասակից երկար էր թվում: Նա մի կերպ խցկեց շրթունքների արանքը, ապա չորթոցով վառեց լուցկին ու մոտեցրեց սիգարի ծայրին՝ հրահանգելով կուլ չտալ ծուխը: Նրանք մի ժամ հերթով վայելում էին սիգարը: Ծխում էին ու ժպտում: Ժպտում էին ու ծխում: Ընթացքում պապը սիգար ծխելու գաղտնիքներն էր պարզաբանում: Ասում էր՝ կուրծքը պարտադիր պիտի փքված լինի, ներքևի շրթունքը գոռոզաբար կախ ընկած: Իմացիր,

քանի դեռ բարձրանում է կապույտ այս ծուխը, ուրեմն դու Աստծուն ամենամոտ կանգնած մարդն ես: Լուրջ դեմքով ասում էր ու տեսնելով նրա փքվող կուրծքն ու ծոմովող շրթունքը՝ հանկարծ փոթկում էր ու երկար շատ երկար ծիծաղում: Պապի վերջին ընկերը, որ շերտ առ շերտ կճպվեց. մատները հասկանում են ընկճվածությունը, բայց փորձում են դանդաղել, որ պապը մի փոքր էլ ապրի, մի հինգ բոպե, մինչև կհասնի վերջին պատառին, որ ամենացավոտը կլինի: Մտտ միջուկի փափկությունը կվառի կոկորդը՝ սուրճի կաթիլները թշնգով կգոլորշանան: Հետո կքայլի, դուրս կգա տնից, որ այլևս չքայլի ու չվերադառնա: Ապրես, բանան, չհեռացար պապիս կողքից: Ուտեմ մոռոթ: Գրասենյակում լռություն է: Հեռանալ է պետք: Մարմինս ասես սոսնձվել է չորուկ աթոռին: Ուրեմն հեռացիր առանց մարմնի: Պատուհանի ապակին թակում են: Շրջվում է: Բանանիկն է: Կանգնել է պատուհանի առջև, կճեպը հպել սառը ապակուն: Խնդրում է: Արի էլի, ուշանում ես, սպասում եմ քեզ: Հիմա կգամ: Գրասենյակի վրա: Իմ գրասենյակը նոնագույն է, որի վրա սփռված է աշխատանքից ազատվելու դիմում՝ նոթատետր, գրիչ, ընկերուհուս լուսանկարի պատառոտված կտորները: Նա դանդաղ հավաքում է իրերը: Նոթատետրն ու գրիչը խցկում է աթոռից կախված պարկանման պայուսակի մեջ, հետո կռանալով սեղանի տակ՝ մի փոքր ամոթխած, լուսանկարի պատառները մեկ առ մեկ մտցնում է բերանը՝ ծամելիս աշխատում սեղանատամները թույլ սեղմել: Գժուկս, էսօր կեսօրին, գրասենյակին հրաժեշտ տալիս, ես ուտում էի կեսիդ կեսը, հետո մյուս կեսը, մեր հիշողությունները խնամքով ծամում էի, որ հեշտ մարսվեն: Մարմինդ ներսումս թող ապրի: Քայլի հետս: Փշաքաղվի: Հաճույքից թաքտա: Որոշել եմ: Գնում եմ: Ժամանակ չկա: Նա կռանում է: Չորեքթաթ մտնում աթոռի տակ: Սեղանից վերցրած մյուս գրիչներն ու մատիտները խցկում գորգի տակ: Պաշում է ու լիզում գորգի խավոտ թելիկները: Կներես, ախպերս, խնդրում եմ, կներես ամեն ինչի համար, չէի ուզում քեզ խփել, կեղտոտ ափսեների համար սիրուն երեսդ դաղեցի: Գնացիր ու կրակեցիր ուղիղ բերանիդ մեջ: Բերանում փամփուշտի համը զգում են: Քամու հոսքը խոտի նման ալիքում է գորգի թելիկները: Նա ելնում է տեղից: Պայուսակը գցում ուսը: Տխուր նայում է կախիչից ճոճվող մուշտակին ու շարֆին: Մուշտակը հագնելով՝ փաթաթում է քո նվիրած շարֆը: Փարիզի ո՞ր խանութից ես գնել: Երևի խանութի անունը «Կապույտ խաղաղություն» էր կամ «Կոկորդիլոսի սիրտ»: Գիշերը՝ անկողնում պառկած, նա պատկերացնում է խանութի ցուցափեղկերը, վաճառողուհուն, ում դեմքի մաշկն ասես խզրզել են հաստ մեխի ծայրով: Փարիզի խանութներից մեկում նուրբ մատներով շարֆ ես ընտրել ինձ համար, շ ա թ ֆ: Մթության մեջ բառն ասես քո բերանից է թռչում: Մտել է բերանիս մեջ, բացել բերանը ու բերանով նկարում է օտար երկրում գործված շարֆը, որից խելքահան անող մաշկիդ հոտն է գալիս: Հուզմունքից ձեռքիդ ափերը խոնավանում են: Դրմփ-դրդրմփ, դրմփ-դրմփ: Միրտը: Խավարում սրտի զարկերը լսելու համար համարձակություն է պետք: Խմել ես ուզում: Նա ձեռքը տանում է մահճակալի տակ: Մատները քսվում են Ծտի բեղերին: Երկար, քնքշորեն շոյում է կատվի մոռոթը, հետո մի կերպ գտնում է շիշը, վերցնում է, դնում բերանն ու երեսի

մկանները ջղակծկելով՝ դանդաղ կոնծում: Մատներդ, որ հանգչում են թիակիս, որովհետև ես քնում եմ փորի վրա պառկած՝ որպես մեր երկխոսության սկիզբ, ու շատ ժամանակ հենց քո պես ձև եմ թափում՝ թե քնած եմ, որ նուրբ ձեռքովդ գրկես մեջքս, շրթունքներդ թեթև հավեն ուսիս ու թրթռան երազային շնչառությունիցդ: Երկներանգ շրթնագծեր՝ հուզմունքից շառագունված: Լեզուդ սահում է շրթունքներիդ եզրերով՝ թրջելով չոր տաքությունը: Ատամներով բռնել լեզվիդ ծայրն ու ձգել բերանիս մեջ: Գողանալ լեզուդ, առնել շրթունքներիս արանքը, զգալ նրա սուր ներկայությունը: Սև կրծկալիդ մի թելիկը սահել է ուսիդ վրայով, ընկել բարալիկ, ոսկեփայլ աղմագիկներով թևիդ: Դու քթով քսվում ես նրա կրծկալի թելիկին, դողալով թույլ կծոտում թևը: Հանկարծ չգարթնես, դուրս չգաս քնքուշ քնից: Չեմ ուզում վնասել իմ աներես հպանքներով, բայց ես գիտեմ՝ դու քնած չես, որովհետև այսդ դանդաղ ընթացքով մեղմիկ շոյում է բարձր: Դու սպասում ես գիշերային իմ անակնկալ հարձակումներին, սպասում ես խորամանկ ակնարկներով: Հանկարծ ոտքով գրկում ես մեջքս, կարճ գիշերանոցդ մինչև կոնքերդ վեր քաշելով՝ կատվի պես գլորվում, փարվում ես մարմնիս: Ոտքերիդ արանքից հորդող տաք հոսանքն այրում է ազդրերս: Իսկ ես երազում եմ, որ մի ակնթարթ հետո պարզապես կհանես գիշերանոցդ. մի ակնթարթ հետո մարմնիդ վրայից վերջնականապես կհեռացնես մեզ բաժանող մետաքսե այդ վերջին թաղանթը, ու գիտես՝ ես սպասում եմ, որ հանկարծ քո արթուն քնի միջով, լուսաբացին մոտ կհամբուրես պարանոցս, ու շրթունքներիդ արանքով դուրս պրծած լեզուդ փոքրիկ ձկնիկի քթիկի պես կծակի մաշկս ու ամեն ինչ կսկսվի նորից՝ պատուհանից ներս թափանցող արևի առաջին կայակների տակ: Իսկ դու շարունակում ես շոյել բարձի ակննջուկը: Նրա պտուկը սևափայլ, մանր գեղձերով, որի գագաթը թույլ բռնում ես կտրիչներով ու լեզվով փաղաքշելով, մերսում անվերջ: Քիմքիդ տաքությունը լցվում է կրծքի մեջ: Նա ներհուն տնքում է, մատները խրում մագերիդ մեջ, մյուս ձեռքով ճնշելով գլուխդ՝ կուրծքն ավելի խորն է մտցնում բերանդ: Մենյակը թանձրանում է ձեր մերկ ու մենակ մարմինների կիսաքաղցր հոտով: Դու միայն նրա մեջ էիր մոռանում ներկայությունդ. նրա մեջ էիր անհետացնում սեփական մարմինդ. նրա բարության ու խոնավության միջով էիր հասնում քեզ: Մայիտակուցների մեջ կուլ գնացող բիբեր: Կայծկլտում են արդեն հեռավոր հորիզոնում: Խոր, խոր մուտք: Հաճելի ցավի սրոփյուն: Քաղցր ճնշումներով: Խոր թափանցում, այնքան խոր, որ դրանից հետո նոր սկիզբ էր, նոր տարածություն, նոր իմաստ, այնքան խոր, որ մի պահ երջանկությունը գրեթե հասանելի էր, շոշափելի ու գտնված, այնքան խոր, որ մահն ու բաժանումն այլևս անհասանելի էին: Նրա ներսում այնքան լուռ էր, որքան վաղուց լքված տան մեջ: Դու տրվում էիր վերադարձի խենթությանը և այդ փախուստը միմիայն նրա լույսն էր, որ հանձնվում էր քեզ, որպես վերջին հնարավորություն՝ ինքնակամ հանձնվող մոլուցք, վաղուց չհնչած խոստովանություն: Դուք թողնում էք անկողինը: Նա նստում է գորգին: Դու կանգնում ես գլխավերևում, նայում կրծքերը բաժանող մութ կորաճեղքին: Նա ավերով սկսում է շարժել կրծքերը՝ հետ-առաջ, երկար դադարներ տալով: Մեղմում է: Մոտեցնում միմյանց: Իսկ դու

համարյա անշունչ կքվել ես, բերանով ու այտերով շոյում ես թիակներին թափված ստվերագույն մազերը՝ զգուշորեն, աշխատելով չդիպչել մաշկին՝ հետո գրկում ես մեջքը, հետո համբուրում փխուր ուտերը, հետո պառկում մեջքով վերև, հետո նա գալիս է քեզ, շատ դանդաղ, դանդաղ. դանդաղ. սպասումդ այնքան անհամբեր է, որ մաշկդ թրթռում է, իսկ նա գիտի, որ դու երբեք չես դիմանում ու օգտագործում է իր առավելությունը՝ ակնթարթները դարեր սարքելով, պտուկները կրծքերից առաջ ընկած, որոնք իջնում են ծոծրակովդ, գազաթիկներով մենաբծեր քաշելով, մինչև ողնագծիդ ավարտը ու կրկին բարձրանում վեր: Դու զգում ես կրծքերի մուտքը մարմնիդ մեջ, որոնք սիրում են մարմնիդ շերտերը առանձին-առանձին, հետո կրծքերը անցնում են միջովդ, պատռում կրծքավանդակդ, դուրս են պրծնում: Հիմա դու կարող ես մարմնիդ վրա շոշափել նրա կրծքերը. շոշափել կոնքերը, աճուկները, ազդրերը, ծնկները, շուրթերը, ոտնաթաթերի կոճերը, կոճերի վրայով անցնող բարակ, բարակ երակները:

Փարիզում դու երևի քայլել ես Ֆլորենի փողոցներով ու պարանոցիդ զգացել դեպի բերանդ ուղղվող անհամբեր ու խոնավ լեզվիս խաղերը: Հիմա քո նվիրած շարֆը փաթաթել եմ բկիս ու պայուսակը ուսիս քարացել գրասեղանների արանքում՝ սաս՝, ի՞նչ անեմ: Զգիտեմ, բայց դու գործընկեր ունես, որին հրաժեշտ չես տալիս: Ատում ես նրան: Նրա սանրվածքը: Նատելաձևը: Առողջանությունը: Հինգ բոպեն մեկ քթի տակից եկող արհեստական ֆսֆոնցը: Ամենօրյա ներկայությունը: Այսօր մի պահ մտածում էիր՝ տեսնես նրա նստած դիրքից թշիղ խալը ի՞նչ տեսք ունի, մե՞ծ է երևում, թե փոքր: Նա ակնթարթորեն է հայացք նետում դեմքիդ: Ի՞նչ կարծիք ունի այտիդ փոսիկների մասին: Գլխի կընկնի՞, որ ջրծաղիկից մնացած հետքեր են: Զրծաղիկ: Պատրանքի ավարտ: Կանաչ պուտիկներ: Արևը կանաչ պուտիկ է: Յուրաքանչյուրն իր բնավորությունն ունի: Ոչ մի կանաչ պուտիկ նույն կերպ չի ցավում: Գիշերը սաստիկ քորվում են: Ուզում եմ եղունգներով մաշկս քերթել: Մայրս գրկում է ինձ: Քեզ էդքան ուժ ո՞րտեղից: Կամխքացել ես: Մեռար մարդուդ սպասելով: Հույս մի տուր քեզ, պատերազմը դեռ երկար կտևի, իսկ դու, այ վախկոտ, ամուսնուդ դավաճանելու համարձակություն չունես: Ձեռքերդ մռռացել ես լվանալ: Մատներիցդ վառարանի խողովակներից թափված մրի հոտ է փչում: Վառարանի խողովակները փութորեն թափ տվող ջինսով կին: Դու մայրի՞կ ես խաղում: Լամպի թրթռուն լույսի տակ դեղնամոմ պատավի ես նմանվել: Դեղձի թառամած կճեպի պես մաշկդ այտերիցդ կախվել է: Գրկել ես ինձ: Քունքս հենվել է կոպիտ կրծքավանդակիդ, ուր ժամանակին երկու ուղանկյունաձև կրծքեր էին շոշափվում, որոնց հագով այժմ նույնիսկ կրծկալներ չես գտնում: Ուտքով հրում ես պատշգամբի դուռը: Դուրս ենք ելնում մաքուր օդի: Մի կերպ կանգնեցնում ես ինձ: Հենում պատշգամբի գոգին: Ասում ես՝ տե՛ս փողոցի լապտերիկների լույսերն ինչ գեղեցիկ են: Կանգնում ես հետևումս ու ողջ եռանդով փչում, որ վառվող մեջքս մի փոքր գովանա՝ փուոոոոոոոոոոո, փոոոոոըըըըըըըըըըըըը, այրուքը սաստկանում է: Էլ չեմ դիմանում: Փորձում եմ բարձրանալ պատշգամբի գոգին: Ցած նետվել: Սարսափահար բռնում ես կոնքերիցս, քեզ ես քաշում, պինդ

գրկում: Թո՛ղ ինձ: Լապտերիկներից արձակվող լույսերն ինչ սիրուն են ալիքվում: Ուզում եմ  
 օդում բերանով որսալ սլացքները: Կանաչ թանձր արևներ՝ խնամքով, մեկիկ-մեկիկ դաջված  
 դեմքիս: Չես հեռանում: Քնել ես կողքս: Վախկոտի մեկը: Քեզ ո՞վ էր ասում հղիանայիր ու  
 ամեն օր ցցած փորդ արևի տակ տաքացնեիր: Հիմա քնած չես: Ես գիտեմ: Իբր փակել ես  
 աչքերդ: Ձևավոր: Վախից փակ աչքերով ես ինձ ծննդաբերել, ջրի ծաղիկ: Փոխանակ բժշկի  
 քամակիս հասցրած ապտակը կանխեիր, երկունքի ցավերից բղավում էիր: Գոնե բժիշկն  
 ազնվորեն, առանց ձեռնոցի ապտակեր: Իսկ իմ առաջին խոսքը առանց ինձ հարցնելու,  
 առանց իմ համաձայնության հարվածի ցավից ծնված այլանդակ ճիչն էր: Երկու պուտիկ  
 կոպերիս վրա. թարթիչներիս ծայրերը թաթախված կանաչուկով. կանաչ աշխարհ:

Ծիտը բարձրացել է մահճակալին, պառկել ոտքերի տակ, անհանգիստ մլավում է: Բերանից  
 ծխախոտի վառվող գլանակը հանելով՝ նա փորձում է մտցնել կատվի բերանը: Գլուխը թեքում  
 է: Չի ուզում: Հետո ձեռքը կրկին մտցնում է մահճակալի տակ: Պիտի, որ էլի շիշ լինի:  
 Հանկարծ մատները քսվում են ծանոթ ու զզվելի ճաղատի: Անհնար է: Աստված իմ: Էլի  
 հրամանատարն է: Մարմինը ցնցելով նա փորձում է օգնություն կանչել ու սենյակի դռան  
 կիսաբացվածքից տեսնում է վախից այլանդակված իր դեմքը, անկշռության մեջ բացուխուփ  
 անող համր բերանը, դատարկության մեջ բերանի առաձգական շարժումները: Կոնյակի  
 կաթիլները դանդաղ ծորում են շրթունքների եզրերից: Նա փորձում է լարել գիտակցությունը,  
 փորձում է հասկանալ՝ արդյո՞ք տանը չի լսվում կոկորդից դուրս թռչող այդ սարսափելի ճիչը,  
 արդյոք ինքը, հենց ինքը լսո՞ւմ է իր ճիչը: Հրամանատարը շնչում է համաչափ: Քթածակերից  
 փչող օդը վառում է: Ես վաղուց գորացրվել եմ, հասկանո՞ւմ ես, ինձ հանգիստ թող,  
 հրամանատա՛ր, ի՞նչ ես ուզում՝ բո՛ղի տղա: Ամեն գիշեր գալիս ես, թաքնվում մահճակալիս  
 տակ ու ձեռքիդ շղթայով գլուխս շաղ ես տալիս: Բայց քո շղթան էլ ինձ չի վնասում: Դիակին  
 ինչքան ուզում ես՝ խփի: Ես միս ու արյուն չունեմ: Դու էդքան բո՞ւլթ ես, մինչև հիմա գլխի չե՞ս  
 ընկել, ախմախ վիժվածք: Չես հասկանո՞ւմ, որ հարվածներդ հիմա լրիվ անիմաստ են:  
 Ջորամասից դուրս դու ոչինչ ես՝ արտում տնկված միտանի խրտվիլակ: Իմպոտենտ: Էն  
 ժամանակ՝ քո սենյակում, էնքան խփեցիր, որ երեսիս մաշկը՝ քիթս, բերանս, դունչս ցրիվ  
 եկան, հետո իմ ձեռքով դեմքիս բոլոր կտորները հատ-հատ ավել տվիր ու ծիծաղից փորդ  
 բռնելով ասիր՝ տար, բաց պատուհանի մոտ պահի, որ քամին քշի: Ջորացրվելուց հետո դու  
 ինձ հավերժական զբաղմունք կտակեցիր, հրամանատա՛ր: Հիմա ամբողջ օրը պատուհանի  
 մոտ կանգնած ժամերով դուրս եմ նայում ու բարձրացող քամու մեջ դիմագծեր եմ հնարում,  
 որ սուր բեկորիկներ դարձած սլանում են, կորում փոշու ամպի մեջ: Բայց հիշո՞ւմ ես,  
 հրամանատա՛ր, ոնց ատամներովդ խզեցիր դեմքս: Մաղ խառնեցիր իրար: Տղերքն ասում  
 էին՝ իբր ամեն օր, լուսաբացին էդ ոսկյա ատամնաշարդ սրում էիր էլեկտրական սրիչով:  
 Երևի կատակում էին կամ գուցե ճիշտ էին ասում: Ես ցավ չէի զգում, հրամանատա՛ր,  
 ուղղակի ինչքան շատ էիր հարվածում գլխիս, այնքան ավելի էր խորանում ներսիս  
 դատարկությունն ու տխրությունը: Գլխիս իջած քո ամեն հարվածն ինձ մտածել էր

սովորեցնում. սովորեցնում էր կրկին հիշել ու հեռանալ՝ կոշիկներին տակ թողնելով մարմինս: Նա երկու ձեռքով պինդ փակում է բերանը: Ատամները դճտացնելով՝ մատները սեղմում իրար, որ հանկարծ ոչ մի ձեռքով, ոչ մի բարալիկ նեղուցով քո թուքը, քո զգվելի թուքը չցայտի բերանիս մեջ: Առավոտյան տողանին, աներեր լռության մեջ, ես չդիմացա ընկերոջս սքանչելի մնջախաղային կատակներին ու փոթկոցով ծիծաղեցի ու չգիտեի, որ ծիծաղի համար երկու տարի բերանով եմ հատուցելու, չգիտեի, որ իմ ծիծաղը բերանիս վերջին հրաժեշտն էր: Երբ ինձ քարշ տվիր սենյակ, փակեցիր դուռն ու սկսեցիր բուրբ ու ռիթմիկ հարվածներով ջարդել մարմինս, այդ պահին ինձ թվաց՝ հարվածներն այնքան անկեղծ են, այնքան կատաղի ու անմիջական, որ ես դրանք ընկալեցի որպես մարմնիս համար այսքան տարիներում բացակա կարևոր մի ձեռքբերում, որպես ազնիվ հաճոյախոսություն: Բայց դու անցար բերանիս: Քեզ իմ բերանն էր պետք: Էս ռեխով էիր ծիծաղում, հա՞ բոզի ծնունդ: Էս ռեխոյ չէր փակվո՞ւմ, զինվո՞ր, հիմա կտենաս ոնց կփակեմ, ես քո համար գնամ կռիվ, կյանքս տամ, քո նման մորը քունածի համար հայրենիք պահեմ, որ ռեխիդ չկարենա՞ս տիրություն անես: Փրփուրե առվակ՝ սպիտակ, ճարճատող պղպջակներով: Դանդաղ, շատ դանդաղ՝ ծորող արյունազեղված այտիդ, որ հետո ձեր տան հյուրասենյակի մեջտեղում դրված փայտե տխուր արկղում կառկայծի, որպես գրիմով քողարկված փոքրիկ մի կղզի: Առավոտյան տողանին ծիծաղո՞ղ զսպել չէիր կարող: Ընկերոջո՞՝ Զիզուի դեմքն այնպիսի անհավանական առաձգականությամբ էր ծամածռվում ու փոփոխվում տարբեր զգացողությունների ու իրադրությունների ժամանակ, որ չծիծաղելը պարզապես չընչելուն էր համարժեք: Հրամանատարը մի ձեռքով բռնում է կոկորդո, մյուս ձեռքի մատներին ուժ տալով սեղմում է ծնոտը, փորձում բացել բերանը: Մատների ճնշումից շրթունքներին եզրերը պռոթվում են: Բերանդ բացվում է: Գլուխդ տարուբերում ես այս ու այն կողմ, անկանոն ցնցում: Քունքով ու ճակատիդ եզրով խփվում ես հատակին: Հրամանատարը լիքը կում անելով՝ թքում է ուղիղ բերանիդ մեջ: Հանկարծ դու սկսում ես ծիծաղել, ծիծաղել, ծիծաղել հիստերիկ քրքիջներով ու թոքային հոնդյուններով: Կրծքավանդակդ դրողում է, ոտքերդ՝ կարծր աղեղվում: Անակնկալից մի տեսակ շշմած՝ հրամանատարը բռնում է մազերիցդ ու գլուխդ սկսում խփել հատակին: Ծիծաղո՞ղ ավելի է սաստկանում: Վերածվում է սենյակի պատերին բախվող միագիծ, անելանելի ոռոնցի: Հրամանատարը սկսում է անկանոն թքոտել դեմքիդ: Հետո ափով փակում է բերանդ: Ձե՛նդ, անասուն, ձենդ, բռնել ես տալի՞ս, ուզում ես հենց հիմա մորթե՞մ, էդ ե՞ս ուզում: Ափը գմռսել է բերանդ: Հիմա ծիծաղո՞ղ լցվում է ներս: Գտնում է իր ճանապարհը: Գտնում է մի վայր, ուր երբեք չես եղել: Ծիծաղում է լռության համար՝ ինքն իր մեջ համեստորեն երջանկանալով: Բանակ գնալուց առաջ մաման ասում էր՝ ի՞նչ սիրուն զինվոր ես լինելու: Հիմա էլ դեմքիս չի նայում: Մենք խոսում ենք ուսերով: Ժամերով հայելու առջև կանգնած փոքրիկ սանրով սանրվում եմ, մազերս չեն երևում, ավելի ճիշտ՝ չեմ տեսնում ինձ, վստահորեն գիտակցում եմ, որ չեմ տեսնում: Ես չկամ ու գիտակցում եմ գիտակցումը, որ չկամ, թվում է՝ եղել եմ ու կամ, բայց չի երևում, որ եղել եմ ու կամ, թվում է





կրծում թոքերդ, երիկամներդ, շնչափողդ, որովհետև դու նրանց աշխարհ ես ընկնում  
 հերձված, որ նրանց համար ներսում ընդարձակ լինի: Նրանք միայն մլավում են, մլավում են,  
 մլավում: Կատունները քեզ անմահացրել են, որ հավերժ լսես մլավոցները, արձագանքների  
 միակ ունկնդիրը լինես: Ասում են՝ կատունները մլավում են, որ մոռանան սեփական  
 երազների մղձավանջները: Գիտակցությունից փախուստ չկա: Փորձում ես սարսափից  
 մեռնել: Չէ, չի ստացվում: Դու անգոր ես: Կատուններով տոգած պարկ,  
 մյառուտու  
 մյառուտու  
 ի՞նչ ես անշարժ հայացքով նայում, հրամանատար:  
 Ուզում ես անունս հիշե՞ս: Շարքային անանուն: Հը, հիշեցի՞ր: Հիմա սենյակից դուրս գալու  
 համար պիտի պարպել կոնյակի ողջ շիշն ու համարձակություն վերագտնել, բացել դուռը ու  
 դուրս պրծնել: Նա մինչև վերջ դատարկում է շիշը: Գրկում է Ծոտին ու մի կերպ մարմնի  
 հավասարակշռությունը պահելով՝ բացում ծանր դուռը: Հիմա քայլ անել է պետք, զինվորիկ:  
 Մի վախեցիր: Քայլը կհեռացնի քեզ: Բարձրացրու ոտքդ: Դիր գետնին կամ  
 պատուհանագոգին: Բայց սկզբում անպայման նայիր փողոցի անցուդարձին: Հանկարծ  
 փողոցում երեխաներ չլինեն: Շատ կվախենան: Պետք չի, որ տեսնեն: Մեղմ ժպիտներով,  
 փամփիլիկ թաթիկներով աղի երեխաներ: Դրսում երևի անձրև կգա: Լավ, եթե ուզում ես, թող  
 անձրև գա: Ու շուկա հասնելու համար փողոցով անընդհատ քայլել է պետք: Ճիշտ ես,  
 հասնելու համար միշտ քայլել է պետք: Ուրեմն գնացինք՝ չմոռանա սկզբում շարժել ոտքերդ:  
 Զինակոչիկներով լցված ավտոբուսը սպասում է քեզ: Տնեցիք ձեռքերը թափահարելով  
 հրաժեշտ են տալիս: Քանի անգամ ես տեսնում այդ ակնթարթը: Դու կանգնած ես ավտոբուսի  
 դռների առջև՝ մոմլաթե տոպրակը ձեռքդ: Ինչ անգոր, զգզված տեսք ունի ձեռքիդ մոմլաթե  
 տոպրակը: Չեմ հասկանում, տանը ուրիշ տոպրակ չկա՞ր: Մայրդ, քույրդ, պապիկը... նրանց  
 դեմքերը կիպ կպած են դեմքիդ: Շնչում են ուղիղ բերանիդ մեջ: Ձեռքերը տանում-բերում են ու  
 ուժգին ապտակներ հասցնում այտերիդ: Ինչո՞ւ են ապտակում, գոնե պաչեն թշերս, ցավոտ  
 ապտակում են: Դեմքերը կիպ հպել են դեմքիս: Ավելի լավ է մտնեն բերանս: Ես դեռ վստահ  
 եմ, որ բերանս ամենաապահով տեղն է, ոչ ոք գորամասում գլխի չի ընկնի, որ մերոնց  
 բերանիս մեջ եմ թաքցնում: Երբ գիշերը բոլորը խոր քնած լինեն, ես կհանեմ նրանց, կշարեմ  
 ցանցավոր մահճակալիս կապույտ, քլոտած վերմակի վրա, կկիսվեմ հետները, հետո անագե  
 զինվորիկների պես միասին կռիվ-կռիվ կխաղանք ու լուսադեմին նորից կխոթեմ բերանս:  
 Կթաքցնեն: Դեհեհե, արագացրու, զինվո՞ր, կարող ա՞՞ ժամերով քեզ պիտի սպասենք: Հաջող  
 արա ու վերջ: Դու արդեն դրսի կյանքում չես: Արագացրո՛ւ, հաջող արա: Ծուռ ոտքերով  
 կարճիկ լեյտենանտը դժգոհ է տոթից նեղված խոզի պես: Համբացած մոմլաթե տոպրակ՝  
 տխուր, ճոճվող ավտոբուսի բաց դռների առջև: Քո հետ չե՞մ, չես լսո՞ւմ: Մի բան էլ դու ասա,  
 տխուր ճոճվող մոմլաթե տոպրակ: Ավտոբուսի շարժիչը հոնդունով միանում է: Այրվող  
 կոկորդդ: Բարի քամուց ճոճվող մոմլաթե տոպրակ. պարանոցը չէր դիմադրել ճուպանին:

Մեջքին իջած լեյտենանտի կիսակոշիկի ուժգին հարվածը տապալում է մարմինը: Հավասար-  
զգա՛ստ: Քայլոռոռով մա՛րջ՝ մեկ, մեկ, մեկ երկու, երեք, ձախ, ձախ, ձախ, աջ, ձախ

Փողոցում նա աշխատում է ճզմել գետնին ընկած տերևները, ծանոթ ճանապարհով է գնում՝  
ազատ, աչքերը փակ, ասես իրենց տան գուգարանից ննջասենյակ տանող միջանցքն է: Քեզ  
ուղեկցում են խանութների ցուցանակները, մոտակա շենքերի ճակտոնները, բաց  
պատշգամբները, լվացքի պարաններից կախված կիսախոնավ սպիտակեղենը,  
պատուհանների ալիքվող ապակիները, թափանցող փոռիկավոր վարագույրները,  
առաստաղներից ճոճվող ջահերն ու թրթռուն ստվերները, պատուհանների ապակիներն  
ուրվագծում են պառավների զզվելի այտուսկրերը, անծանոթ կանանց առկայծող ու մարող  
սիլուետները: Երեսդ անորոշ տագնապից այլայլվել է: Քրտնել ես: Ծանր ես շնչում: Բերանդ  
չորացել է: Դու մոտենում ես թերթի կրպակին ու վաճառողուհուց մի բաժակ ջուր խնդրում:  
Փոքրիկ փեղկից սևեռուն նայելով՝ նա մեկնում է ջրով լի դեղին բաժակը: Խմում ես դանդաղ,  
կում-կում՝ անհանգիստ նայելով շուրջը: Գլուխդ կախելով՝ փոքրիկ փեղկից վերադարձնում  
ես բաժակը: Վաճառողուհին վերցնում է, հետո կրկին ձեռքը փեղկից դուրս հանելով հանկարծ  
մատները խրում է մազերիդ մեջ, մատների թույլ շարժումներով ու եղունգների ծայրերով  
մեղմ շոյում մազերդ: Նուրբ մատներ, բարակ մաշկի տակ հազիվ թրթռող հողախաղեր,  
եղունգներդ ալ կարմիր լաքով ներկված՝ խրվում էին մազերիս մեջ, շոյում ծոծրակս, երկու  
ձեռքով գրկում էիր մեջքս, ինչքան շատ էի մարմնովս ճնշում մարմինդ, այնքան ավելի խորն  
էին եղունգներդ խրվում մաշկիս մեջ, ու ես տեսնում էի մեջքս շոյող ալ կարմիր լաքով  
ներկված եղունգներով մատներիդ շարժումները, տեսնում էի սենյակի առաստաղին կպած,  
ասես բաժանվում էի մարմնիցս, մի փոքր հեռվից ուսումնասիրում կիսաբաց աչքերդ, այտդ  
այտիս հպված, ուսդ համբուրող շրթունքներս, առաստաղին ուղղված գունատ դեմք, ստվերով  
խառնված վարսերի շեկություն, հետո պատուհանից թափանցող փողոցային լապտերի  
լույսը, որ թրթռում էր մեջքիս վրայով քայլող ոտնաթաթերիդ տակ, որոնց սառը դուրեկան  
սեղմումները ողնագծովս դանդաղ մոտենում էին ծոծրակիս, անկշիռ, բոբիկ ոտնաթաթեր.  
փափկաքայլեր՝ փետրե. ձեռքերդ ինքնաթիռի թևերի պես լայն բացել ես, մարմնիդ  
հավասարակշռությունը մի կերպ պահելով՝ քայլում ես մեջքիս վրայով, բարձրաձայն  
հաշվում՝ մեեեեեե, երկուուուուու, երեեեեեք ու ծոծրակիս մոտ հանկարծ փլվում մեջքիս,  
պտտում գլուխս ու խոր համբուրում: Իրարից հեռացած շրթունքներիդ արանքում, մութ  
ստվերի մեջ նշմարվող չարաճճի լեզվիդ ծայրը գալիս է խրվելու բերանիս մեջ, փորփրելու,  
քանդելու ներսս: Իրարից հեռացած շրթունքներիդ արանքում մութ ստվերի մեջ նշմարվող  
չարաճճի լեզվիդ ծայրին սպասել երկու տարի, զորացրվել, սպասել ու չգտնել: Ալ կարմիր  
լաքը ներկում է եղունգներդ ուրիշի մաշկի մեջ խրվելու համար: Գոնե իմ սիրած ալ կարմիր  
լաքը չքսես: Գոնե փոխես հիշողության գույնը: Մի տեսակ է՞ք: Հո բան չի՞ պատահել: Վա՛տ եք  
զգում: Չէ, քայլում եմ: Ուղղակի սկսել եմ շուտ հոգնել: Լա՛վ, դե գնա, միայն քայլելիս ոտքերիդ  
տակ նայիր, գլուխդ հանկարծ չբարձրացնես, քեզ կնկատեն: Նա իջեցնում է ապակին ու

հեռանում կրպակի խորքը: Մրգի շուկա տանող մոխրե մայթերով փողոց. դեղատան նեոնային խաչ, որ փաթաթված է կանաչ, թրթռուն օձուկով. օձանելիքների ձվաձև, վիսկիի գույն ունեցող սրվակներ. պիցայանոցից լավող խուլ աղմուկ: Քայլելիս աննկատ դրոշմվում են հիշողությանդ մեջ՝ որպես գույների, առարկաների, շոշափուկների, ձայների հպանցիկ, աղոտ առկայծումներ: Օրերից մի օր անկողնում ապրելիս ժամանակ անցկացնելու տեսիլքներ՝ փոքրիկ երեխայի պես, որ մենակ՝ մութ սենյակի լռության մեջ, թաթիկով խաղում է օրորոցից կախված խաղալիքի հետ: Խաչմերուկն անցնելիս հանկարծակի մեխվում ես, անակնկալ շրջվում ու նայում ես ինձ, հետո ցրում ես հայացքդ, իբր այլ ուղղությամբ ես նայում ու կրկին հաշվում ոտքերիդ տակ տրորվող տերևները՝ մեկ, երկու, երեք, երեք, մի բույս՝ չորս, հինգ, վեց: Լսի՞, դու հիշու՞մ ես՝ գրասենյակի մոտ մի հսկա կաղնի կար, որի տակ հնարավոր է ընկած տերևներ լինեն: Արի գնանք ճզմենք: Մպասի մի փոքր մտածեմ: Հազիվ ես զսպում քեզ: Շատ կուզես ետ դառնալ, ճզմել կաղնու տակ ընկած բոլոր տերևները, բայց՝ ուշ է: Կներես, չեմ կարող գալ: Դու գնա, ինձ սպասում են: Շարունակում ես քայլել՝ ձեռքերդ խոթելով շավարիդ գրպանները: Մեկի մեջ արևածաղիկի սերմի երկու հատիկ ես շոշափում: Պետք է մեկ հատիկ լիներ, որտեղի՞ց հայտնվեց երկրորդը: Առաջինը դեռ անցյալ շաբաթվանից էր մնացել: Ծովի ափին էիր գնել քսան դրամով: Վաճառողը մի ձկնորս մանչուկ էր՝ հսկա կուզը մեջքին: Նա մի աչքը սև ժապավենով փակել էր, ոտքին խաղալիք բեռնատար մեքենա էր ամրացրել: Իսկական ծովահեն էր:

Այդ օրը գրասենյակ գնալու փոխարեն դու գրկել ես Ծտին, գնել երկու շիշ վիսկի, վերցրել պայուսակդ ու Բաբայան փողոցի կանգառից նստելով 72 համարի դեղին ավտոբուսը՝ իջել ես վերջին կանգառում ու սևորակ, մռայլ քարերի վրայով մեկ ժամ քայլելով հասել ծովի ափ: Լուսաբացի դեռևս չհեռացող պուտիկավոր մշուշի մեջ, դու ու Ծիտը կողք-կողքի քարացել եք, ծովի այս անմարդ ափին: Նայում եք: Թունդ վիսկին խմում ես կում-կում՝ վրայից մանր խճաքարեր ու լպրծուն խեցիներ լցնելով բերանդ, որոնք ծնոտներիդ թույլ շարժումներից լավ չեն ծամվում: Փոքրիկ ծովահենը մոտենում է աննկատ: ձկնորսական կարթը ձեռքում պինդ բռնած հանկարծակի ցցվում է դիմացդ: Ձուկ բռնելու այդպիսի փոքրիկ կարթ կյանքում առաջին անգամ ես տեսնում: Գրիչի չափ է: Ձեռքերդ վեր, ասում է տղան՝ կարթը ճակատիդ պարզելով: Ես աշխարհի ամենաչար ծովահենն եմ: Ինձ՝ միոտանի, միաչքանի Արջ են ասում: Ես Արջի նման ուժեղ եմ էէէ, որ սովել եմ էէէ: Նա կարթը հպում է ճակատիդ: Թաթիկը մի փոքր դողում է: Քեզ ո՞վ է իրավունք սովել իմ ծովին նայել, հը՞ն: Խմածությունդ երեխայից կոծկելու համար փորձում ես չնայել նրա աչքերին, շոյում ես Ծտի մեջքը, որ մռլտալով հոտոտում է, ու պոչը քսում Արջի ոտքին: Կներես, միոտանի, միաչքանի Արջ, հիմա կզնամ: Բայց Արջը միանգամից ընկճվում է, կարթը ձեռքում թուլանում է, ճակատիդ սահում ցած: Պազելով դիմացդ՝ Արջը իջեցնում է գլուխն ու գտնելով խոնարհված աչքերդ, խեղճացած հայացքով նայում: Ծովի ալիքները նրա բիբերում հորիզոնում կայծկլտող նավակներ են հիշեցնում, ու այնքան տխուր է ծովը երեխայի աչքերում: Երևի հոգու խորքում չի ուզում, որ

գնաս: Դե լավ, քեզ չեմ խփի: Մեղք ես: Ես քո կատունն ա՞: Հեսա կտամ կատակի: Արջը նորից թափով ոտքի է կանգնում ու կարթը օդում անկանոն ցնցելով, ջղային հայացքով նայում է կատվի ուղղությամբ: Փռշտ: Փա՛խի, դեբիլ: Փռշտ: Ծիտը աչքերը դինջ կկոցելով անտարբեր մի հայացք է նետում օդում ցնցվող կարթի ուղղությամբ, ու մի հայացք էլ Արջի ջղային դեմքին, ապա կրկին փովում է քարերին: Չի վախենո՞ւմ: Չայն չես հանում, ցուցամատով խաղում ես կլոր խճաքարին փաթաթված սրճագույն մագոտ մամռախոտի հետ: Կատուդ որ մեռնի՝ շատ կտխրե՞ս: Խութերին բախվող հսկա ալիքների թնայունից ձայնդ խլանում է: Լավ, թողնում եմ ծովիս նայես, բայց մի պայմանով՝ իմ բռնած ձուկը պիտի առնես, լսում ե՞ս, գնանք քեզ ցույց տամ,- մատը տնկելով անորոշ ուղղությամբ՝ ասում է տղան, հետո փոքրիկ բթով ու ցուցամատով երկու անգամ քաշելով ցից-ցից մագերիցդ, քայլում: Դու շիշն ու պայուսակը վերցնելով՝ անձայն հետևում ես ոգևորված մանչուկի կարճ ու ջղային քայլերին: Ծիտը մլավելով քայլում է կողքովդ: Դըխկ, դըխկ, դըխկ, դըխկ. նրա ոտքին ամրացված բեռնատար մեքենան քարերին դիպչելուց կիսով չափ փխվել է: Որոշ ժամանակ անց հանկարծ մեխվում է տեղում, թռչնի պես լայն բացում է թևերը: Վերջ: Հասանք: Չշարժվես: Կանգնած եք մամռախոտի թանձր փետուրի մեջ, ասես ճոճվող գորգի վրա: Տեսադաշտ գրեթե չկա: Ձեր ոտքերի տակ գոլորշապատ բլրակներ են շոշափվում ու խոշոր գլաքարեր: Նա կռանում է, ձեռքով նշան անում քեզ: Դու դանդաղ մոտենում ես, պպում կողքը: Արջը մի ձվաձև գլաքար է բարձրացնում ու մատնացույց անում փխուր հողի մեջ հազիվ նշմարվող արևածաղիկի մի սերմնահատիկ: Կյանքումդ էսպիսի ձուկ տեսե՞լ էիր՝ հինգ աչքանի, կապույտ բմբուլներով: Միրտ էլ չունի: Հրճվանքից պսպղում է: Թշերը կարմրել են: Չէ, չէի տեսել: Բա՞, տասը օր ընկած էի հետևից, Աֆրիկայի մոտ հազիվ բռնեցի: Նավս էլ ծակվել էր, առանց նավ եմ բերել սրան: Դե հիմա փող տուր ու ձուկը վերցրու: Դու ձեռքդ տանում ես գրպանդ, երկու տասը դրամանոց ես հանում, մեկնում ես տղային: Նա գումարին նայում է ակնհայտորեն հիասթափված: Էսքան աղքատ ե՞ս: Քեզ ամեն օր խփում են, ասում են՝ գնա ծովափ մարդկանցից փող հավաքի, հա՞: Որ չհավաքես իրիկունը քեզ ուտելիք չեն տա, հա՞: Տուն չեն թողնի՞: Գլուխդ կախել ես: Էլ փող չունե՞ս: Իրոք, կարո՞ղ ա դու մուրացկան ես: Պապադ, մամադ ծեծում են քե՞զ: Կներես, Արջ ջան, էլ փող չունես: Դե լավ, լավ, մի լացի: Փողը տուր: Ափիցդ նա վերցնում է երկու տասը դրամանոցները, անհանգիստ շարժումներով մտնում է շավարի գրպանն ու զգուշորեն արևածաղիկի սերմը դնում ափիդ մեջ, հետո միանգամից շրջվում է ու թռչկոտելով վազում, դըխկ, դըխկ, դըխկ, դըխկ, անընդհատ շրջվում է ու ծիծաղում, հետո լրիվ կորում է սահող մամռախոտի մեջ, միայն լսվում է ներկայությունը մատնող ծիծաղը: Մի բուպե, Արջ: Կանգնի: Դու վազում ես նրա ետևից, մխրճվում կապույտ երակներով կաթնագույն մամռախոտի մեջ: Մայթաքում ես սղիկ խճաքարերին, ընկնում-բարձրանում: Արջը ծիծաղում է, ծիծաղում: Լարում ես լսողությունդ, փորձում որսալ ծիծաղի հետագիծը, վազել ծիծաղի անդրոշմ հետքերով: Հանկարծ կանգնում ես, արմունկիդ սուր ցավ ու հոսուն տաքություն զգում: Բայց կրկին վազում ես հեռացող ծիծաղի ետևից:

Արրորրորրորրորրորր: Կանգնի: Ոտքերդ ծանրանում են: Նայում ես ներքև՝ մինչև ծնկների սառցե ջրերի մեջ ես: Հանկարծ մառախուղը լրիվ պատռվում է: Դիմացդ անվերջ ծովն է: Մոխրագույն ալիքները հսկա պարիսպներ են շարում: Ջրի դարսդարս գանգվածները ճնշում են երկինքը: Մարսափագրու ձայներով ալիքների կատարները ոլորվում են, սպիտակ պղպջակները հեալով պտտվում, ճարձատյուններով լուծվում են մոխրե եռող բացվածքների մեջ: Ծովի ձայնը կլանում է Արջի գրնգում ծիծաղը: Հիմա ասես ալիքներն են ծիծաղում՝ անորսալի, տխուր, հավերժ հեռացող: Ծովը քո ներկայությունից ավելի է հուզվել: Դորդում է հոգուդ մեջ: Ինչու երբեք չկա և միշտ ներկա է: (Կոստան Ջարյան, Միացյալ նահանգներ, էջ 22): Ճայերը սավառնում են, տատանվում ալիքների կատարներին, ինչպես քամու հետ պար բռնած սպիտակ օդապարուկներ՝ ընդարձակելով երկնքի տխուր տարածությունը: Նստում ես սառցե ջրի մեջ: Մարմինդ անզգայացել է: Մի կերպ գլխիդ ես քաշում վիսկիի վերջին կաթիլները: Արրորր: Բարձր ալիքները հասնում են մարմնիդ, տապալում, ծածկում են քեզ: Ավագախառն ջուրը լցվում է բերանիդ մեջ, կուլ գնում: Խռխռալով ու խեղդվելով փորձում ես մի մասը փսխել: Բերանդ դժվարությամբ է փակվում: Շրթունքներիդ պատռվել են: Սաստիկ այտուցվել: Գազարագույն լոզերդ սորում են շրթունքներիդ ծալքերով: Ալիքը կրկին գալիս է, խփվում: Հասցնում ես միայն բերանդ փակել ու շունչդ պահել: Ծոփ մլավոցը լավում է ինչ-որ հեռավոր քամու ներսից՝ ասես անպատկեր, երագի խորքից: Ինչքան լուռ է ալիքի տակ, ինչքան ապահով ու մենակ. ինչպես հավերժական սառույցների տակ, ուր վաղուց խլացել են դինոզավրերի ձայները, ինչպես մորդ արգանդի թանձրության մեջ, ուր ճոճվում ես խարխուլ մակույկի պես: Դուրս չգաս ներշնչելու կյանքի մահվան նողկալի մտածմունքները, հարցեր տալու ու պատասխաններ փնտրելու: Ինչուների տիրոջ մերը, ինչուներ որոնողներին էլ հետը, բոլորը պարտվել են՝ չպարտված: 28 տարեկան, անկայուն տականք, հնություն բոլոր հների պես՝ իբր չհամակերպվող ներկայությանը, քեզ պես հնություններ դեռ շատ կգան ու կանցնեն՝ ծովի հուզող գեղեցկությունը թողած. որ միակ շոշափելի տեսիլքն է. ծովը հիմա ու հետո չունի, չի գգում իր ափին մարմնիդ ծանրությունը, միլիոնավոր տարիներ առաջ քո պատկած տեղում արածել են խոտակեր, երկարավիզ, բարեհամբույր ժպիտներով դինոզավրեր ու ծովի ջուրը երկար կնճիթներով իրենց մարմինները ցողող փոչոտ մամոնտներ, քեզնից առաջ, քեզնից հետո չի եղել, անծիր ջրերի միջով, իմ վերջի մեջ իմ սկիզբն է (Թ. Ս. Էլիոթ, «Չորս կվարտետ», անգլ. թարգմ.՝ Սամվել Մկրտչյան): Հիմա ալիքները շոյում են մարմինդ, ինչպես փափուկ վերմակդ, որ ավելի էր փափկում հատկապես ամանորի գիշերը, երբ հայրդ ու մայրդ խաղալիք մեքենան ու փայլվումն, գեղեցիկ դիմակը դնում էին բարձիդ տակ ու վերմակիդ ծայրերից բռնելով՝ քաշում էին, ծածկում բաց ուսերդ, ոչ մի տարբերություն չկա՝ պարզապես պլաստիքինին փոխարինել է արյան-մսի-ոսկորների շաղախը. մահճակալ սենյակի պատին հենված, պատուհանից ներս թափանցող լուսե գիծ, որ սահում է նրա քթիկի ու երագից թրթռացող, զգայուն շրթունքների վրայով. սենյակը լցվել է կոճակի չափ փոքր թոքերից

արտաշնչող անուշ քնի կաթնային հոտով. վերմակից դուրս եկած փոքրիկ երեխայի անմեղ ուսեր, որոնց վրա, պատահում է, սիրուն խալեր կամ պեպեններ են լինում, բոլոր ուսերն էլ ունեցել են ամանորի գիշերը բարձի տակ նվերը զգալու և փափուկ վերմակով ծածկվելու պատրանք, գիտեմ, ունեցել են. դարս-դարս ջրակնճիռներ, դուրս եկած մետաքսե հատուկենս թելեր, դագաղի սրթսրթան սավանը, որ քսվում է մահից սփրթնած ցից-ցից մազերիդ, ու ցից-ցից մազերդ կամացուկ շոյող մորդ մատները, եղունգների ծայրերը մերթընդմերթ քսվում են սրթսրթան սավանին ու դագաղի փայլուն լաքին, պապի ծառից պտուղ քաղող, պտուղները ճյուղերից առանձնացնող հատիկ-հատիկ քաղելու խանդավառ խիղճը, չէ, չուներ խիղճ, որովհետև պտուղները կաթուկ խրխնջում էին ուսվելու ու քաղվելու սարսափից, բայց ուրախություն կար, փոքրիկ աղջնակի ճիչ կար տերևների ու ճյուղերի կախումների մեջ՝ չար էր այգին, բայց հին էր ու գինովցած մարդու բարի հայացքով, իսկ շարժումը՝ միսը քաշած ոսկորին, ոսկորի վրա հյուսվածքներ ու մկանախրձեր, հետո արյուն, ասես մեկը գինու սափորից տոտիպություն է լցրել՝ երակներ անունով գետերի մեջ՝ Կարինում կառքի անիվներ պատրաստող վարպետների ձեռքեր՝ մատներին խորդուբորդ բլրակներով՝ աղակույտեր, ներսը աղ է՝ բյուրեղացած, մատների հողերը փաթեկած կոշտուկներ, ոստերի մռայլ, մաշկ պատռող կարծրությամբ՝ բայց նուրբ էր, նուրբ՝ փայտը անողոքաբար տաշող, բայց ջլերն ու փշերը նրբորեն, գրեթե անհայելի ողորկող, ինչպես աղջկա մաշկը փաղաքշող ձեռքիդ երագանքը, որ սահում է կորերից կորեր, սահում է ու փափկությունից սիրտը տրոփում է. գիշերները լռության մեջ կրակի պայթող ճարճատյուններ, անիվը պտտելով խանձում է գազարագույն լեզվակներին, հավերժության պարույրներ քանդակող կոշտուկներով այդ բոլի ձեռքը, հողը ճզմող ծոծրակիդ նստած արևի ծանրության տակ այգում աճեցրած ծառեր՝ որպես արևի հայելիներ, տերևների սոսափյունները մատնում են պապիկի կարճիկ քայլերի վայրենությունը՝ անգուսպ ձեռք՝ պարանը ագուցել էր երեք անգամ, որ հանկարծ պոռնիկ մահը չկառչեր կյանքից. մի ձեռք, մի պարան, մի տատանում, կոճղ՝ ոտքերիդ տակ, ծառերի ստվերները սափրված, մաքուր կարմրաթուշ այտերին, շրթունքիդ եզրին ընկած մութ կետիկ, նրանք Կարինում Փարիզից կառքի անիվների պատվեր են ստացել ու, ես գիտեմ, ամենասքանչելի անիվները պատրաստվել են Գուստավ Ֆլոբերի ու նրա սիրածի՝ Լուիզ Կոլեյի համար, որոնք հետո Բովարի ու Լեոն էին խաղալու ու սքանչելի այդ անիվները գլորվում են Փարիզի փողոցներով՝ Մեն Մեվերով, Կյուրանդիենների քարափով, Մեռլ գետափնյայով, Մարսյան դաշտի հրապարակով, հիվանդանոցի այգիների հետևով, նրան տեսան, նրան տեսնում են Ռուժ Մարկում, Գայարբուայի հրապարակում, հետո տեսնում են Փափագյանում, Արամ Խաչատրյանի վրա, Կոմիտասով նա իջնում է, Բաղրամյանով մտնում Սայաթ-Նովա, թեքվում է Տերյան, իջնում, իջնում՝ պարոն, վերջապես ո՞ւր էք գնում. ուր որ ուզում եք՝ անորսալի հեռավորությունից հնչում է հարազատ ձայնը. կառքի ստվերը տեսնում են կասկաղի նեղիկ փողոցներում, տեսնում են Աբովյանով իջնելիս, հանկարծ Տիկնիկային թատրոնի մոտ, Շախմատի տան դիմաց, Կոնդի դժվարանց խաչմերուկներում, «Կոստան

Ձարյան» գրքերի ու թիթեռնիկների խանութի ցուցափեղկով սահելիս. կառքը կանգ չառնելով գնում է մինչև լուսաբաց, զգալով քաղաքի նրբանցքների խոնավ անցողիկությունը, չստացված սալիկները, անիվների կամակոթ, բայց սահուն պտույտները. պապիկի անիվների վրա զարդաքանդակներ խազող ձեռքը, որ առավոտյան բակում տեսնելիս բրիչի պես խրվում է մազերիդ մեջ, շոյում է ու հարցնում՝ լա՞վ ես, ոնց որ տխուր ես, հո բան չի եղել, իսկ դու երես ես առնում, երեսդ իելառի պես անկանոն թափահարում ես, սլանում անտառ ու թափառում մինչև ուշ գիշեր՝ գլխիդ մակերեսին, ողջ օրը զգալով նրա ծանր աջը, ինչքան աղմուկ ամփոփած լռություն կար նրա ձեռքի մեջ, ինչքան ծառի ստվերներ կային ու ջրեր, որոնք աշխատանքից հետո առվահոսում էին, լվում թևերի երկարությունը, թեկուզ մազերդ խուզես, հետքը չի անցնի, հինգ մատանի ծանրությունը, ասես հոսուն, թանձր սևահող, մի բուռ մարդ է, վերցնում ես մի բուռ սևահող՝ մարդ է, դիպուկահարից ընկած զինվորի աչք է, կամ աղջկա ծոծրակի խոպոպիկ, կամ ծիտ է, կամ նապաստակի պոչ՝ դե հիմա մի բուռ հողը մարդկային է ու կարևորն էլ դա է. բացի պապիցդ առավոտյան քեզ ոչ ոք չի հարցրել՝ լա՞վ ես, ոչ ոք չի մերվել քո խոզ բնավորությանը, քո բնածին չար հակումներին, տխրելով բոլորին տանջելու հաճույք պատճառող վարքին, մորդ ու հորդ նկատմամբ անկեղծ զզվանքին, անվերջ խաբեբայություններին. սանտիմետր առ սանտիմետր չմեռնելու համար ձմեռը անտառից ծառի ճյուղեր կտրտած, ցախավելներ պատրաստած ու վաճառած փոքրիկ տղայի փոքրիկ ձեռքից, որ հարազատ էր՝ հարազատություն էր, մի տեսակ պետքական էր քեզ՝ հանգստացնող ակնթարթ էր. ձի-կնոջը անպատկառ ձևով սանձահարած գլուխդ շոյող թրծված մկանաթելերի կծկումներ. ոչ ոք, բացի այդ ձեռքից քեզ չի ընդունել այնպես, ինչպես որ կաս, քեզ ընդունել են այնպես, ինչպես, որ չկաս, դրդել են հենց սկզբից կեղծավորության ու քծնանքի, փորձել են շեղել պատրաստին, ստիպել են դառնալ բարի, ստիպել են, բայց երբեք ցույց չեն տվել, խաբել են քեզ, որ դու ամենալավն ես, այնինչ դու ամենավատն ես, որ քո ճշմարտությունն է. սովորեցրել են չմեղադրել, այսինքն հաշմանդամության, սովորեցրել են աշխատել ու աշխատել, աշխատել ու աշխատել, աշխատել, աշխատել, որ կյանքդ դառնա անասնական ու անզգա անշարժություն. դու վերջացած էգոիստ ես, որովհետև գնահատում ես միայն այն ձեռքը, որ շոյել է գլուխդ, նախամարդու բնագոյային անկեղծությամբ, առանց սեթևեթանքների ծառի ձայնով, որ առավոտյան հարցրել է՝ լա՞վ ես, բարձրանում ես կոճղին՝ ծովի ամայի ափին թավալվող, բարձր ալիքներից, մերթ գլորվում է ավազների վրա, մերթ ճոճվում ալիքների գազաթին: Ծիտը զվարթ խաղի է բռնվել կոճղի հետ: Ֆշշոցով մեջքը փշաքաղում է, մեխվում ներքևում, սպասում: Տագնապից դողացող թայթով ուժգին խփում է, հիստերիկ ցատկոտում ու փորձում է կրկին հետ հրել:

Դու տեսնում ես նրանց կիսաբաց աչքերով՝ ակնախոռոչներիդ մեջ լցված ավազահատիկների ցանցից: Բերանքսիվայր ընկած ես ավազների վրա: Խմելու բան այլևս չունես, շիշը չկա. երևի ճանապարհ է ընկել բաց ծով: Ավազահատիկները դրձտում են բերանիդ մեջ: Թող քեզ ալիքները լրիվ լիզեն, իսկ դու տես, թե ինչպես է նա դարս-դարս ստվերի նման հազվիվիհազ





փրկությունը, իմ վերջին խոսքը. ես գալիս եմ տիրելու քո մարմնին, մտնելու նրա մեջ՝ հիշելու ու գուցե նորից վերագտնելու ինձ. գալիս եմ քեզ՝ հաղթահարելով մանրիկ անրակիդ գոգավորումը, դեմքովս պատռելով թացված վարսերիդ պատնեշները, ամեն ակնթարթ զգալով մեր հանդիպման հպությունը. ես կքվում եմ ու բերանիս մեջ առնում կրծկալիդ բարակ, սև թելիկը, որի տակ խուլ բաբախում է ինձ սպասող մեր միակ մաշկը, հետո աստամներով սեղմում եմ, դեպի ինձ ձգում թելիկը, լեզուս սահեցնում տակով, խրում մաշկիդ մեջ, մատներովս նկարում սեղմիրանիդ աղեղնաձև բացվածքը, որտեղ լուռ պառկած է իմ նվիրած կարմիր քարով կախազարդը, որին այնքան համահունչ է մաշկիդ գունատությունը, հետո սեղմում եմ կոկորդդ, իմ շրթնաշշունջ՝ ես քեզ սիրումները համարյա անլսելի են դառնում, որովհետև արդեն քո մեջ են ձայնում, քո հեռավոր կղզում, որտեղ, բացի մեր խոր ներկայությունից, չկա ուրիշ ոչինչ. մենք հանգցնում ենք սենյակի լույսը՝ մեր մերկությունը վստահելով պատուհանից ներս թափանցող բծացույթերին, որոնց ստվերների երանգները թրթռում են մեր մարմինների վրա՝ պաշտպանելով անպաշտպան մենակությունը. ես շոյում եմ սրունքներդ, սեղմում ազդրերդ, մատներս սղում են, այրվում փափուկ շեքերիցդ, լողում են աճուկներիդ նեղուցներով. ես ակնթարթ առ ակնթարթ հալվում եմ քո մեջ. մենք ակնթարթ առ ակնթարթ հալվում ենք մեր մեջ, մարմնիս ծանրությունը կլանում է քո թափանցող, բամբակե անկշռությունը. այնքան հաճելի են մազերիս մեջ խրված՝ ծոծրակս շոյող քո մատների քնքուշ շարժումներն ու մերթընդմերթ մաշկս ծակող եղունգներիդ աղեղները. խելագարվում եմ ականջիս՝ կիսաչոր շրթունքներիդ ակամա հպումներից ու փակ աչքերիցդ, որոնց տեսնում եմ փակ աչքերով, որովհետև համոզված եմ, որ մեր աչքերը հիմա փակ են ու երբեք այլևս չեն բացվելու, որ մեր մարմիններն այսուհետ ապրելու են նույն երերուն դիթմով, ու մեր լեզուներն ուսումնասիրելու են իրար անվերջ՝ խորանալով ու բացահայտելով նոր աշխարհներ, իսկ ես գիտեմ՝ դու իմ հավերժական վերադարձն ես, ու ես կտակվում եմ քեզ՝ որպես անակնկալ մի ժառանգություն, որովհետև, իմ նիհարիկ աղջիկ, ես վերադարձել եմ ու գլուխս հենել ուսիդ: Ավտոբուսը շարժվում է. սրճարան երազանքի առաձգականացած արտացոլքը հալչելով երերում է ապակու վրա: Ձեռքով հրաժեշտ ես տալիս պատուհանին հենված նրա ցից-ցից մազերին: Ավտոբուսը թեքվում է, մտնում խաչմերուկ: Անհետանում է տեսադաշտից:

Մի տեսակ սաստիկ ցրտում է: Դողդողում ես: Հիմա միայն տաք սուրճ ես երագում կամ տաք գինի՝ եփված թույլ կրակի վրա՝ սերկնիլի, դեղձի շերտիկներից պոկված փշերով: Եթե դու նստած լինեիր սրճարանում, կանաչ, մանր ծաղիկներով զգեստով, որ մատնում էր մարմնովդ անցնող թրթիռները, գինու միջից շրթունքներիս արանքով հանկարծ մեխակի մի հատիկ կթլըմփար լեզվիդ ծայրին, որովհետև ես կձգվեի, դուրս կցցեի լեզուս ու մեխակը կփոխանցեի լեզվիդ՝ հպանցիկ փաղաքշելով շրթունքիդ եզրը: Օրերով ես մտածում էի այդ մենակյաց ու երջանկությունից սարսափ առաջացնող մկանիդ մասին, որ հայտնվում էր լույսի արագությանը, հանկարծ խլրտում բերանիս մեջ՝ խելագարի պտույտներով, ասես տաք մոխրի վրա թաքտացող ձկնիկ: Միրտս կանգնում էր, բերանս չորանում, կում-կում ջուր էի



Հեռանում ես կանգառից: Հատում փողոցը: Ուսող ուժգին դիպչում է մի անցորդի ուսի, բայց ներողություն խնդրելու հավես չկա: Պուտիկավոր ասֆալտին նայելով՝ քայլում ես առաջ: Դեմքիդ վրա թրթռում են սեքս-շոպերի ցուցափեղկերից արձակվող գազարագույն սրտիկներն ու բաց կապույտ նապաստակները: Անցնում ես խորովածանոցների, կանացի կրծկալների խանութի, հացաբուլկեղենի ու շոկոլադեղենի կրպակների կողքով: Շուտով թեքվում ես ոլոր նրբանցք ու կանգնում գույնզգույն ներկված ցուցապակու մոտ: Սրճարանն է: Խեցած կանաչ, գեղեցիկ ցուցանակը կարճ ընդհատումներով լույսեր է սփռում: Ներս ես մտնում: Դանդաղ քայլերով առաջանում ես, նստում շագանակագույն փայտե սեղանի առջև: Խորը քնած Օտին զգուշորեն դնում ես աթոռներից մեկի վրա, շոյում մեջքը: Մարդկային շշուկներ ես լսում: Մի քանի բոպե հետո մատուցողը բերում է սուրճը: Տաք սուրճ. կես գդալ շաքարավազ. բաժակից գոլորշու հետագիծը հեռացող, տխուր ամպի պես հալչում է սրճարանի փոքրիկ տարածությունում, որտեղ բացի քեզնից ցուցափեղկին հենված կողքի սեղանին նստած են երկու աղջիկ: Ջրի կաթիլները սահելով կանգնում են քթիդ ծայրին ու պոկվում դժվար. պոկվում են, ճողփյունով մխրճվում սուրճիդ մեջ: Տաք բաժակը գրկել ես երկու ավերով, դեմքդ պահել գոլորշուն: Օտի նման համարյա մոքիդ մեջ մոլտում ես կիսափակ աչքերով: Գոլորշին մեղմ շոյում է դիմագծերդ, ինչքան երջանիկ եմ ես, ինչքան երջանիկ եմ ես, ինչքան երջանիկ, դուրդ եկավ սրճարանը, էստեղ հրաշալի գրքեր կան, գեղանկարչական ու ֆոտոլուսանկարերի ալբոմներ. ես քեզ էնքան շատ եմ սիրում, դու իմ միակ հարազատ ընկերուհին ես, արի երկար նստենք, էնքան շատ եմ սիրում քեզ, արի էսօր գրուցենք մինչև մուրճն ընկնելը, քեզ շատ բան ունեմ պատմելու. եսսս, եսսսս էլլ, քքքեզ եմմ, շշատ սսսսիրուումմ. գիտեմ, կյանքս, դու մենակ մի լարվի, լա՛վ. սիրուն աղջիկ. հիմա սուրճ կլիմենք. գոլորշին շոյող շրթունքներդ, քիթդ, թարթիչներդ. գոլորշին հալվում է դեմքիդ մեջ՝ փափկաքայլ կայակ. համարյա անհպելիորեն, խրվում է՝ անցավ, անհետք, խրվում է, խրվում, անզգայանում, ասես իր բացակայությամբ միշտ ներկա է հեռավոր մի տեղ, խորհրդավոր, անէ մի ստվերի մեջ, անորսալի երևակայության համար. կում-կում, գոլորշու փետրիկներ հետ, խմում ես սուրճդ. պատկերացնում ես ինչպես են բարակում կումները, դողալով ճանապարհվում ներքև, սպիտակ ձյան միջով հոսող առվակի պես՝ ջերմացնում մարմինդ. լսի, դու չես պատկերացնում՝ ինչ սիրուն աչքեր ունես, բիբերիդ գույներն անընդհատ փոխվում են, հիմա, որ ժպտում ես, փիրուզագույն են դառնում, բիբերիդ միջի պուճուրիկ սև ավազահատիկները հալվում են, համարյա լրիվ կորչում, գոնե գիտե՛ս, որ հրաշք աչքեր ունես, գիտե՛ս. դու դդուռուռու, քոնոնոնոնոնոն էլլ են սիրունն, շշատտ, սսիրուն, հա կյանքս, բայց դու հենց հիմա արևի շողի տակ չես տեսնում աչքերիդ գույնը, որ տեսնես, կխելագարվես, մի քիչ էլ առաջ արի, որ շողը սփռվի բիբերիդ մեջ. աաաաաաաաաաա հիմա լրիվ մուգ կապույտ դարձան, ծովի գույն, նուրբ ալիքներով, Աստված իմ, ինչ սիրուն են, սկզբում հանդարտ, շատ հանդարտ, բայց երկար նայելուց հետո հանկարծ մանր ալիքները սկսում են ծփալ, ոչ ոք չի դիմանա քեզ, դիմանալու ոչ մի հնարավորություն չունեն, քքքոո

աչքքքքքերինն էլ, չեն դիմանա, դուուուու էլ չգիտես, ինչ սիրունն են աչքերրրր, նրանք ծիծաղում են, նրանք ծիծաղում են, նրանք ծիծաղում են, ծիծաղում. գլուխը թեք դրել ես ձեռքերիդ վրա ու կաթնամշուշի միջով նայում ես ցուցափեղկին հենված կողքի սեղանին նստած միմյանց աչքերով հիացող երկու աղջիկներին. լույսի շողը ցուցափեղկից ներս թափանցելով՝ սահում է ծովի գույն ունեցող աղջկա թարթիչների վրայով ու հասնելով մինչև քո սեղանը, կոշիկիդ քթին քսվելով բեկվում հատակին, մմմմմա քքքեզզ կկարոտտելա, մմմմմմի օօր արի մ մ էր տտտուունն. անպայման, ես էլ մամայիդ եմ շատ կարոտել, հիշում ես, ինչքան ծիծաղեցինք. էն, որ բացատրում էր մեզ. նրանք ծիծաղում են, ծիծաղում են, ծիծաղում. ի՞նչ բարակ, նուրբ մատներ են, խնամված մատներ՝ մերթընդմերթ ճակատին թափվող մի քանի վարսեր ետ տանող մատներ, որ ետ տանելուց հետո թեթև թափահարում են մեղրագույն վարսերը. շրթունքներդ թույլ թրթռում են, դու ժպտում ես. ես տեսնում եմ, առաջին անգամ տեսնում եմ զարմանքի ու երջանկության անճիգ քո ժպիտը, մի տեսակ ապշել ես, ինչպես են այս երկու աղջիկները ասես մարդկության աշխարհից հեռացած՝ նստել սրճարանում ու հիանում միմյանցով, ասես նայելով տեսնում են միմյանց հավերժ առաջին անգամ, տեսնում են ու հիանում, տեսնում են ու հիանում, տեսնում են ու հիանում, տեսնում են ու հիանում. մանկական անկեղծությամբ, անգիտակից, ինքնամոռաց՝ տրվելով հիացմունքի խանդավառությանը, այն զարմանահրաշ ունակությանը, որի հայրենիքը մանկություն է, այն աչքերին, որոնք պարզապես ի գորու չէին կտրվելու գույնզգույն գնդակներից, որոնց խաղացնում էր ծաղրածուն, օդում ճախրող թռչուններից, կարմիր տրամվայներից, որոնց հետևից վազում էիր երագներիդ մեջ, բակում քաչալ տիկնիկով խաղացող երկու ցից պոչիկներով փոքրիկ աղջակից, ում գծի պես սիրում էիր ու հիմա համոզված ես, որ երբեք ոչ մեկին նման սիրով չես սիրելու. սրճարանում նստած այս երկու աղջիկներն ապրում են մանկության աշխարհում, նրանց հաջողվել է կառչել, մնալ ու երբեք չհեռանալ և գուցե նրանք չգիտեն այդ մասին. դու փորձում ես հիշել, թե վերջին անգամ երբ ես պարզապես հիացել, ոչինչ մտքիդ չի գալիս և հանկարծ ներքին, հաստատուն մի ձայնով համոզվում ես, որ հիանալու կարողության կորուստն է, որ անվերադարձ ջնջել է հարցերիդ բոլոր պատասխանները, իսկ դրանք քո խոնավ ու փոքրիկ բռի մեջ էին. վարսերը ետ տանող աղջկա նուրբ մատները շոյում են թշիղ վրա գոյացած ժպտափոսիկը, հենց հիմա տարօրինակ հարագատություն ես զգում, դրա համար էլ ժպտում ես՝ նույն անգիտակից, ինքնամոռաց, անկեղծ ժպիտով, արբեցնող երջանկություն զգալով, որ պարզում է աղջիկների գրնգում ծիծաղը և սա հիացմունք է. հենց հիմա դու հիանում ես. հիանում ես՝ ինչպես են աղջիկները հիանում ու փորձում ես պինդ բռնել, կառչել, հիացմունքիդ անակնկալ վերադարձից. ժպիտդ լայնանում է, բայց աչքերդ սկսում են փակվել, կոպերդ սարսափելի ծանրացել են, թանձր թմրությունը դանդաղորեն հաղթում է գիտակցությանը, կկկաարմիրր ման ման մանննիկյուր ուննն ենմմմ, ֆրանսսիական կկկկկտամ քեզ, սիրունն է եղունգններիդ կսազզի, գծուկս ես էնքան մանիկյուր ունեմ, ուզում ես, ես քեզ կնվիրեմ, լիքը. չչէէէէէ, էտ իմմմ

Ֆֆֆրանսիականնա, լլավնաաա, նրանք ծիծաղում են, նրանք ծիծաղում, ծիծաղում, ձայները իլլանում են, գնալով աղճատվում. վերջին ճիգերով փորձում ես պահպանել գիտակցությունդ, կոշիկիդ մոտ հագիվիագ նշմարվում է աղջկա թարթիչներից սահող լույսի շողը, ձեռքդ մի կերպ երկարում ես, փորձում մատներդ հպել շողին, մտածում ես շողին հպվելով դեռ կպահպանես հիացմունքիդ վերջին փշրիկը. նրանք ծիծաղում են, նրանք ծիծաղում են, ծիծաղում են, ծիծաղում. իսկ դու քնել ես՝ գլուխդ դրած մի ձեռքիդ, մյուս ձեռքդ սահել է, ընկել հատակին. դեմքիդ ժպիտը չի անցնում, թրթռուն ժպտավոսիկը ասես հիացմունքի դրոշմը լինի: Նրա ակնթարթային վերադարձն ու վերջին հրաժեշտը: